ԽՈՍՐՈՎԱԿԵՐՏ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՊՈՒՐԱԿԸ

Գայեանէ Քոչարեան

Փաւստոս Բուզանդը հաղորդում է. «Եւ հրաման տուեց Թագաւորն [Խոսրով Կոտակ Արշակունին (330-338) - Գ. Ք.] իր զօրավարին՝ աշխարհից բազմաթիւ մշակներ հաւաքել, անտառներից վայրի կաղին հանել ու բերել տնկել Այրարատեան գաւառում՝ սկսելով արքունի ամուր բերդից, որին ասում են Գառնի, մինչեւ Մեծամօրի դաշտը, այն բլուրը, որ կոչւում է Դուին եւ գտնւում է Արտաշատ մեծ քաղաքի հիւսիսային կողմում: Եւ այսպէս մերի տնկեցին գետի ընթացքով դէպի ներքեւ, միչեւ Տիկնունի ապարանքը: Նա այս մերին կոչեց Տաճար մայրի[1]: Մի ուրիշ մերի էլ տնկեցին նրանից դէպի հարաւ, եղեգնուտի եզերքով, եւ ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով. սրա անունն էլ դրին Խոսրովակերտ: Նոյն տեղում շինեցին նաեւ արքունական ապարանքներ: Երկու մերիներն էլ պարիսպներով փակեցին, առանց իրար հետ կցելու, անցուդարձի ճանապարհի համար: (Մերին) աճեց ու բարձրացաւ: Ցետոյ թագաւորը հրամայեց ամէն տեսակ երէներ ու գազաններ ժողովել ու լցնել պարսպապատուած տեղերը, որպէսզի նրա թագաւորութեան որսի՝ զբօսանքի եւ ուրախութեան տեղեր դառնան: *Վաչէն [սպարապետ Վաչէ Մամիկոնեանը - Գ. Ք.] անմիջապէս կատարեց թագաւորի ասածները»*[2]:

Ըստ Մովսէս Խորենացու՝ Խոսրով Կոտակը «զբաղուած էր զբօսանքներով, թոչնորսութեամբ եւ այլ որսերով, որի համար էլ նա անտառ տնկեց Ազատ գետի մօտ, որ մինչեւ այսօր էլ կոչւում է նրա անունով [այսինքն՝ Խոսրովակերտ - Գ. Ք.]»[3]:

Խոսրով Կոտակի կաղնետունկ անտառապուրակները պատմագրութեան մէջ հետագայում եւս յիշատակւում են «Խոսրովակերտ» մէկ ընդհանուր անունով[4]: *Առաջին հայեացքից տրամաբանական է թւում այս երկու անտառների նոյնացումը, քանզի երկուսն էլ կաղնետունկ էին, երկուսն էլ՝ «որսի տեղեր»: Այսուհանդերձ, ըստ արքայի յստակ հրամանի, ստեղծուել էր երկու առանձին կաղնետունկ պարսպապատ տարածք՝ երկու տարբեր տեղանուններով: Խոսրովակերտ անտառապուրակում արքունական ապարանքներ տեղադրելով՝ Խոսրով Կոտակը կարեւորում էր այս դաստակերտի դերը պետականութեան ամրապնդման իր նախաձեռնած ծաւալուն ծրագրում*[5]:

Ազատ գետի ջրառատ հովտում ձեռնարկած լայնածաւալ ծառատունկով արքան դաշտը վերածում էր անտառի[6], *իրականացնում՝ անտառի նմանակում (իմիտացիա), ստեղծում անտառապուրակ՝ բնապատկերային ճարտարապետական կազմակերպուած միջավայր: Այս ձեռակերտ անտառապուրակի՝ արքայական ապարանքներին յարող տարածքում, յիրաւի, անհրաժեշտ էր կերտել արքունի կացութաձեւին վայել առաւել նրբագեղ միջավայր: Եւ, իրօք, տեսանելի է, որ Խոսրով Կոտակն իր «թագաւորութեան որսի՝ զբօսանքի եւ ուրախութեան տեղերի» համար ստեղծել է ճոխ սիզամարգերով, բուրումնաւէտ ծաղկոնցներով, սաղարթախիտ ծառուղիներով, արհեստական լճակներով պճնուած եւ երէներով լեցուն գեղատեսիլ միջավայր:*

Արքունի ապարանքի եւ որսատեղ-անտառապուրակի համադրութիւնը, որպէս արքաների «հանգստի ու հաճոյքի վայր», *գիտական գրականութեան մէջ յայտնի է* պարադիս (paradeisos) *անուամբ: Ասորեստանում Սարգոնեան արքաների համար քաղաքամերձ դեկորատիւ անտառապուրակի, արքայական ապարանքի, ծառապատ որսատեղ-արգելոցի համալիր կառոյցը* «հաճոյքի այգի էր»[7]: *Աւելի ուշ Աքեմենեան (հետագայում՝ նաեւ Սելեւկեան) աշխարհակալ արքաների եւ նրանց տեղապահ իշխանաւորների համար լայնածաւալ կայսրութեան ողջ տիրոյթում սփռուած պարադիսները* որսորդութեան, մարզանքի, ուժերի վերականգնման, հանգստի եւ զուարճանքի վայրեր էին[8]:

Տարածաշրջանում իշխող գեղագիտական պահանջներին համահունչ միջավայր՝ արքունի վերնախաւի զուարճանքի «վայելուչ տեղեր», *Հայկական լեռնաշխարհում վկայուած են դեռեւս Ք. ա. I հազարամեակի սկզբից ի վեր: Ճարտարապետօրէն կազմակերպուած բնապատկերային միջավայր՝ արքայավայել անտառապուրակներ ստեղծելու աւանդոյթը շարունակուեց նաեւ հայ արքայատոհմերի շրջանում՝ անմիջնորդ եւ անընդմէջ:*

Այսպէս, ըստ սկզբնաղբիւրների վկայութիւնների.

Վանի թագաւորութեան արքաները *քաղաքից դուրս՝ ջրանցքի ափին, փարթամ ծառաստաններում,* «իրենց հաճոյքի համար» *կերտել են բուրումնաւէտ նոճեփայտ ծածկերտել են բուրումնաւէտ նոճեփայտ ծածկով կացարան-ապարանքներ եւ կից՝ վայրի կենդանիների որսատեղ-արգելոցներ*[9].

Երուանդ Վերջինը *կառուցել է «գեղեցիկ ու չքնաղ յօրինուածքով՝ ծաղկոցներով, բուրաստաններով, պերճաշուք այգիներով, «արդարեւ բերրի թագաւորական տեղ, եւ Կողի ջերմութիւնը» մեղմացրել «այգիներով եւ բուրաստաններով»*[11].

Տիգրան Մեծը *Տիգրանակերտի արուարձանում կառուցել է «պալատ՝ ընդարձակ զբօսայգիներով, որսատեղերով եւ լճերով»*[12]:

Այսպիսով, նուիրական կաղնուտում՝ պաշտուող ծառերի միջավայրում, հիմնուած Խոսրովակերտ արքունի ծառազարդ ապարանք-անտառապուրակը հանդիսացաւ Հայոց դարձին նախորդած ժամանակներում տեւականօրէն իշխած բնապաշտական աշխարհընկալման ուշացած դրսեւորում, եւ տիրակալի հզօրութիւնն արժանապատուօրէն ներկայացնող պարադիսներից վերջինը մեզանում:

Հասարակական գիտակցութեան մէջ օրըստօրէ առաւել խորութեամբ ներթափանցող նոր կրօնը անվերապահօրէն մերժում էր «պարադիսային» հնաւանդ կենսաձեւի հայեցակարգը[13]: *Նոր կրօնը կանոնակարգում ու սրբագործում էր հանրային վարքն ու բարոյագիտական նորմերը, անկաշկանդ կենսասիրութեանը հակադրում ժուժկալ, զուսպ, չափաւոր ապրելակերպ:*

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 «Տաճար մայրի» անտառի վերաբերեալ տե՛ս. Գ. Քոչարեան, *«Տաճար մայրի» կաղնետունկ անտառապուրակ,*- «Հանդէս ամսօրեայ», 2004, էջ 415-428:

2 Փաւստոս Բուզանդ, *Հայոց պատմութիւն*, Երեւան, 1987, III, Ը:

3 Մովսէս Խորենացի, *Հայոց պատմութիւն* (այսուհետեւ՝ Խորենացի), Երեւան, 1990, III, Ը:

4 Ղազար Փարպեցի, *Հայոց պատմութիւն*, Երեւան, 1982, Գ, ՀԸ, էջ 351, *Պատմութիւն Սեբէոսի*, Երեւան, 1979, ԽԲ, 20, էջ 138:

5 Խոսրով Կոտակի՝ երկրում տիրող ներքաղաքական անկայուն իրադրութեան յաղթահարման, պետական իշխանութեան հզօրացման եւ կենտրոնացման լայնածաւալ ծրագրի քննական վերլուծութեանը կ'անդրադառնանք յաջորդ յօդուածում:

6 Մերօրեայ հետազօտութիւնները բացայայտել են Ազատ գետի հովտում կաղնուտների ռելիկ-

© National Library of Armenia

տային զանգուածներ, այս մասին եւ համապատասխան գրականութիւնը տե՛ս Գ. Քոչարեան, *«Տաճար մայրի»*, էջ 416:

7 **A. Leo Oppenheim**, *On Royal Gardens in Mesopotamia*, "Journal of Near Eastern Studies", vol. XXIV, N 4, 1965, p. 331-333.

8 **Xenoph., Anab.**, I, II, 7; I, IV, 10, Cyrop., VIII, VI, 12, Diod., XIV, 80, 2; XVI, 41,5; Plut., Alc., XXIV, Art., XXV, Demet., L.

9 **И. Дьяконов**, *Ассиро-вавилонские источники по истории Урарту*,- "Вестник древней истории", 1951, 2, надпись 49 (199), (213), մանրամասն տե՛ս Գ. Քոչարեան, *Արքունի ծառազարդ ապարանքը Երուանդակերտից առաջ եւ յետոյ*,- «Գիտական աշխատութիւններ», II, Գիւմրի, 1999, էջ 122-123:

10 **Խորենացի**, II, ԽԱ, ԽԲ:

11 Նոյն տեղում, II, Զ (Վաղարշակ=Արտաշէս Ա նոյնացման մասին տե՛ս **А. Бериханян**, *Древнеармянские востаники*,- "Вестник древней истории", 1956, 2, стр. 52-53, Գ. Քոչարեան, *Արտաշէս Ա Բարին՝ որպէս հզօր պետականութիւն կերտող*,- Գիտական աշխատութիւններ, III, Գիւմրի, 2000, էջ 22-27):

12 **Appian.**, Mithr., 84.

13 Խոսրով Կոտակի կաղնետունկ անտառապուրակների ստեղծման ժամանակավրեպ լինելու մասին առաւել մանրամասն տե՛ս Գ. Քոչարեան, *«Տաճար մայրի»*, էջ 423-424:

«ԱՐՀԵՍՏ ՀԱՄԱՐՈՂՈՒԹԵԱՆ»-Ը ՀԱՅ ՀՆԱՏԻՊ ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀՈԼՈՎՈՅԹՈՒՄ

Ասատուր Փաշայեան

1675 թուականին Ֆրանսիայի Մարսէլ քաղաքում լոյս է տեսել «Արհեստ համարողութեան» վերնագրով մի գիրք[1], որը թուաբանութեան հայատառ առաջին տպագիր գիրքն է[2]: Միեւնոյն ժամանակ այն հայատառ առաջին տպագիր գիրքն է ճշգրիտ գիտութիւնների բնագաւառում[3]:

Տպագրիչ-գրահրատարակիչ, մշակութային եւ եկեղեցական գործիչ Ոսկան Երեւանցին (1614-1674) իր տպարանը Ամստերդամից 1669 թուականին նախ փոխադրել է Լիւոռնոյ (Իտալիա) եւ ապա՝ 1672-ին՝ Մարսէլ[4]:

1675 թուականին Մարսէլի հայոց տպարանում լոյս են տեսել 3 գրքեր՝ «Գիրք այբուբենից եւ կերպ ուսանելոյ զեզուն իտալական (այբբենարան), «Գիրք զլեզուն իտալական (այբբենարան), «Գիրք վայելուչ եւ հարկաւոր հանուրց հայկազունեաց» եւ մեր՝ վերը յիշատակուած «Արհեստ համարողութեան»-ը:

Խնդրոյ առարկայ «Արհեստ համարողութեան»-ը, չնայած տպագրուել է 1675-ին՝ Ոսկան Երեւանցու մահուանից մէկ տարի անց, այնուհանդերձ, այն Ոսկանեան տպագրութեանն է պատկանում: Այդ է վկայում գրքի յիշատակարանը. «Այդ է վկայում գրքի յիշատակարանը. «Աւարտեցաւ պիտանացու եւ շահաւէտ գրգուկս համարողութեան ի փառս մեծագոյնս Աստուծոյ եւ ի վայելումն հանուրց հայկազունեաց վաճառականաց յամի ներ մարմնութեան Տեառն. 1675 Նոյեմբերի ամսոյ 21.ի մարզիլեայ քաղաքի ի հայրապետութեան տեառն Յակոբայ հայոց Կաթողիկոսի եւ ի թագաւորութեան Լուտովիկոսի չորեքտասան երրորդի արքային Ֆրանցիզաց: Արդ որք օգտիք սովաւ յիշեցեք զմատակարարս սորին եւ զաշխատողս եւ մանաւանդ զհանգուցեալն ի Քրիստոս զՈսկան վարդապետն, եւ զազգատոհմս նորին բնաւս. ընդ որս եւ դուք յիշեցեալք լիջիք ի Քրիստոս աստ եւ ի հանդերձելումն. Ամեն»:

Ոսկանեան տպարան եւ Ոսկանեան հրատարակութիւն հասկացութիւնները լաւագոյնս սահմանել է Ռ. Իշխանեանը. «Ոսկանեան տպարան ասելով, անշուշտ պէտք է հասկանալ գրահրատարակչական մի նշանակալից կազմակերպութիւն, որ գործունէութիւնն սկսել է նախքան Ոսկան Երեւանցու մասնակցութիւնը նրա աշխատանքին եւ շարունակել է Ոսկանի մահից յետոյ»[5]:

«Արհեստ համարողութեան» տիտղոսաթերթում հեղինակը չի նշուած: Գրուած է սակայն հետեւեալը. «ԱՐՀԵՍՏ /ՀԱՄԱՐՈՂՈՒ/ԹԵԱՆ:/ ԱՄԲՈՂՋ ԵՒ ԿԱՏԱ/ՐԵԱԼ:/ Թարգմանեցեալ ի պէտս Հայկա/զունեաց եւ մանաւանդ Վա/ճառականաց:/ Եւ տպագրեցեալ ի տպարանի/ սրբոյ Էջմիածնի եւ սրբոյն Սարգ/սի զօրավարին: / Ի հայրապետութեան տ[եառ]ն Յակո/բայ ամենից հայոց Կաթուղիկոսի/ եւ ի միապետութեան Լուտովիկո/սի չորեքտասան երրորդի արքային /Կալլիացւոց:/ Ի ՄԱՐՁԻԼԵԱՅ/ Յամի ներ մարդեղութեան Տ-[եառ]ն/ 1675. օգոստոսի ամսոյ 25:/ Ի. Յ. Հ. Բ. Տ. Պ:/ [Յակոբ Հոլով Բիւզանդեան]»:

Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ Գ. Զարբհանալեանը առաջինը փորձեց վերծանել գրքի տիտղոսաթերթում գրուած յապաւումը՝ Ի. Յ. Հ. Բ. Տ. Պ: Յ-ին վերագրել է Յակովբ, Հ-ին՝ Հոլով, իսկ Բ-ին՝ Բիւզանդեան: Արդիւնքում ստացուել է Յակովբ Հոլով Բիւզանդեան:

© National Library of Armenia